ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՊ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Օրերս տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հերթական երկրորդ պլենումը, որը քննարկեց ՀԿՊ Երևանի քաղկոմի քարտուղար ընկ. Գ. Փահլևանյանի զեկուցումը՝ քաղկոմի և շրջկոմների կողմից սկզբնական պարտիական կազմակերպություններին ցույց տրվող ղեկավարության մասին։

Զեկուցողը նշեց, որ պարտիայի Երևանի քաղաքային և շրջանային կոմիտեները որոշ աշխատանք կատարում են սկզբնական պարտիական կազմակերպությունների նկատմամբ ղեկավարությունն ուժեղացնելու, արտադրական պլանների կատարումը և կուլտուրական շինարարության խնդիրների հաջող կենսագործումն ապահովելու համար կոմունիստների և բոլոր աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու ուղղությամբ։

Քաղաքի պարտիական կազմակերպությունները, մեծ ոգևորությամբ հավանություն տալով ՍՄԿՊ XX համագումարի պատմական որոշումներին, և այն ընդունելով որպես աշխատանքի մարտական ծրագիր, մշակեցին պրակտիկ միջոցառումներ դրանց կենսագործումն ապահովելու համար։ Համագումարի արդյունքների քննարկումը սկզբնական պարտիական կազմակերպություններում առաջ բերեց քաղաքական և աշխատանքային ակտիվության նոր վերելք։ Այդ մասին վկայում են արդյունաբերության զարգացման և քաղաքային շինարարության բնագավառներում ձեռք բերված հաջողությունները։ Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները համախառն արտադրանքի այս տարվա 4 ամսվա պլանը կատարեցին 104,9 տոկոսով։ Գերակատարվել են նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման պլանային առաջադրանքները։

ՍՄԿՊ Կենտկոմի հուլիսյան պլենումից հետո որոշ աշխատանք կատարվել է արդյունաբերության մեջ տեխնիկական պրոգրեսն ապահովելու, արտադրական ռեզերվները հայտնաբերելու և արդյունավետ օգտագործելու, նորարարական շարժումը լայնորեն ծավալելու ուղղությամբ։ Առանձնապես լավ արդյունքների են հասել Կիրովի անվան, «Պոլիվինիլացետատ», Ձերժինսկու անվան, «Կանաչ» գործարանների պարտիական կազմակերպությունները։

Զեկուցողը մանրամասն խոսում է արդյունաբերության, շինարարության, քաղաքային տնտեսության, ինչպես նաև սովետական հիմնարկների և ուսումնական հաստատությունների ղեկավարման գործում պարտիայի քաղաքային և շրջանային կոմիտեների աշխատանքի թերությունների մասին։

Անցնելով պարտիական կազմակերպությունների կողմից կատարվող իդեոլոգիական աշխատանքին, ընկ. Փահլևանյանը կանգ է առնում աշխատավորության շրջանում կատարվող քաղաքական-մասսայական աշխատանքի և կոմունիստների քաղաքական ուսուցման հարցերի վրա։ Պարտիայի շրջանային կոմիտեները, ասում է նա, կազմակերպել են մշտապես գործող սեմինարներ՝ պրոպագանդիստների, պարտիական ու տնտեսական ակտիվի համար, որտեղ ուսումնասիրվում են ՍՄԿՊ XX համագումարի նյութերը, կոնկրետ էկոնոմիկայի հարցերը։ Սակայն պրոպագանդիստական աշխատանքում որպես խոշոր թերություն մնում է այն, որ շատ պրոպագանդիստներ ու դասախոսներ տեսական հարցերը սերտորեն չեն կապում պրակտիկ խնդիրների հետ, խոր վերլուծման չեն ենթարկում մեր թերությունները։

ՍՄԿՊ XX համագումարից հետո,— ասում է զեկուցողը,— պարտիայի քաղկոմը և շրջկոմները մի շարք միջոցառումներ են նշել սկզբնական պարտիական կազմակերպությունների հետ կապն ուժեղացնելու, նրանց ցույց տրվող ղեկավարությունը բարելավելու համար։ Պլենումը կոչեց պարտիայի քաղկոմին, շրջկոմներին և սկզբնական պարտկազմակերպություններին բացահայտելու և վերացնելու իրենց աշխատանքի թերությունները, պարտիական-կազմակերպչական և պարտիական-քաղաքական աշխատանքը ուղղելու Հայաստանի Կոմպարտիայի XVIII և ՍՄԿՊ XX համագումարների կողմից առաջադրված խնդիրների կատարմանը։

Զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությունն անցավ գործարար մթնոլորտում։ Ելույթ ունեցան 25 մարդ։

Ելույթ ունեցող ընկերները քննադատության և ինքնաքննադատության նշանաբանով բացահայտեցին սկզբնական պարտիական կազմակերպությունների ղեկավարման գործում պարտիայի քաղկոմի և շրջկոմների աշխատանքի թերությունները, գործնական առաջարկություններ արեցին դրանց վերացման համար։

Պլենումում նշվեց, որ պարտիայի քաղկոմի և շրջկոմների կողմից սկզբնական պարտիական կազմակերպությունների ղեկավարման մակարդակը դեռևս չի համապատասխանում ՍՄԿՊ XX համագումարի պահանջներին։ Պարտիայի քաղկոմը և շրջկոմները չեն ապահովում դիֆերենցված, բարձրորակ ղեկավարություն բոլոր սկզբնական պարտիական կազմակերպությունների նկատմամբ, թույլ են աշխատում պարտկազմակերպությունների մարտունակությունը և տեղերում գործերի վիճակի համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Սկզբնական պարտիական կազմակերպությունների աշխատանքի գլխավոր թերությունը մարդկանց հետ ամենօրյա հետևողական, քրտնաջան աշխատանքի բացակայությունն է։ Շատ դեպքերում պարտիական կազմակերպություններն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում պարտիական կյանքի լենինյան նորմաները խստորեն պահպանելու, ողջ պարտիայի անդամների ու թեկնածուների դաստիարակությանը, անբավարար աշխատանք են կատարում իր կազմակերպության առջև յուրաքանչյուր կոմունիստի պատասխանատվության բարձրացման, պարտիական կարգապահության ամրապնդման, ներպարտիական դեմոկրատիայի զարգացման և քննադատության ու ինքնաքննադատության ծավալման ուղղությամբ։

Պլենումը նշեց, որ պարտիայի քաղկոմը և շրջկոմները անբավարար են ղեկավարում մինիստրությունների, գերատեսչությունների, քաղաքային և շրջանային Սովետների սկզբնական պարտիական կազմակերպություններին, նրանց ուշադրությունը թույլ են ուղղում սովետական ապարատի աշխատանքի հետագա բարելավմանը։ Հիմնարկային պարտիական կազմակերպությունները անբավարար են իրականացնում ստուգման ֆունկցիան, գոյություն ունեցող թերությունների մասին ժամանակին չեն հայտնում պարտիական օրգաններին։

Զեկուցողը և ելույթ ունեցող ընկերները լուրջ թերություններ բացահայտեցին բուհական և ստեղծագործական կազմակերպությունների ու կոլեկտիվների, նրանց պարտիական կազմակերպությունների աշխատանքում։ Քաղկոմը և շրջկոմները բուհական պարտիական կազմակերպությունների ուշադրությունն անբավարար են ուղղում բարձրորակ կադրերի պատրաստման և ուսանող երիտասարդության գաղափարական-քաղաքական դաստիարակության գործին։

Պլենումում նշվեց, որ պարտիայի քաղկոմը և շրջկոմները դեռևս անհրաժեշտ աշխատանք չեն կատարում սկզբնական պարտիական կազմակերպությունների քարտուղարների հետ, անբավարար են կազմակերպում պարտիական աշխատանքի փորձի փոխանակումը։ Քաղկոմն ու շրջկոմներն ավելի շատ զբաղվելով ընթացիկ հարցերով, քիչ են բարձրացնում և լուծում քաղաքի տնտեսական ու քաղաքական կյանքին վերաբերող խոշոր հարցեր։

ՀԿՊ Երևանի Մոլոտովյան շրջկոմի քարտուղար ընկ. Ս. Խաչյանը իր ելույթում խոսում է այն մասին, որ ՍՄԿՊ XX համագումարից հետո պարտիայի շրջանային կոմիտեն որոշ չափով բարելավել է սկզբնական պարտկազմակերպություններին ցույց տրվող ղեկավարությունը, սկսել է կոնկրետ օգնություն կազմակերպել նրանց քարտուղարներին։ Այդ նպատակով շրջկոմը սիստեմատիկաբար անցկացնում է սկզբնական պարտկազմակերպությունների քարտուղարների սեմինարներ։ Միևնույն ժամանակ նա նշում է, որ շրջանի մի շարք պարտիական կազմակերպություններ դեռևս անբավարար են աշխատում յուրաքանչյուր կոմունիստի հետ, լրջորեն չեն զբաղվում երիտասարդ կոմունիստների և պարտիայի անդամության թեկնածուների քաղաքական դաստիարակության, պարտիական կյանքում նրանց ակտիվության բարձրացման հարցերով։ Այդ գործում սկզբնական պարտկազմակերպություններին անբավարար են օգնում պարտիայի քաղկոմը և շրջկոմը։

Գրողների միության պարտբյուրոյի քարտուղար ընկ. Վ. Գրիգորյանը ինքնաքննադատաբար նշեց, որ պարտիական կազմակերպությունը դեռևս անբավարար է աշխատում գրողների մարքսիստական-լենինյան պատրաստականությունը բարձրացնելու ուղղությամբ։ Գրողների պարտիական կազմակերպությանը անբավարար են ղեկավարում և օգնում պարտիայի քաղկոմը և Միկոյանի շրջկոմը։ Անհրաժեշտ է, որ պարտիական օրգաններն ավելի կոնկրետ օգնեն մեզ՝ գրողների շրջանում դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու, նրանց կյանքի հետ սերտորեն կապելու համար։

ՀԿՊ Կենտկոմի քարտուղար ընկ. Բ. Սարկիսովը խոսելով քաղաքի և ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների համար քննարկվող հարցի կարևորության մասին, նշեց, որ կազմակերպչական և պարտիական-քաղաքական աշխատանքի կենտրոնը տեղերում սկզբնական պարտիական կազմակերպություններն են և նրանց մարտունակությունից ու հաջող գործունեությունից է մեծ չափով կախված արտադրական պլանների և պետական առաջադրանքների կատարումը։ Մեր պարտիայի հիմքը կազմող սկզբնական պարտիական կազմակերպությունների նկատմամբ ղեկավարության ուժեղացումը, նրանց գործունեության բարելավումը ՍՄԿՊ XX համագումարի առաջադրած տնտեսական և քաղաքական խնդիրների հաջող կենսագործման կարևոր պայմանն է։ Վերլուծելով քաղաքի սկզբնական պարտիական կազմակերպությունների աշխատանքի թերությունները, ընկ. Սարկիսովը նշեց քաղկոմի և շրջկոմների կողմից սկզբնական պարտկազմակերպությունների ղեկավարման ցածր մակարդակը։ Շատ սկզբնական կազմակերպություններ դեռևս վատ են կատարում իրենց կանոնադրական ֆունկցիաները։ Պարտիական կոմիտեները, բյուրոները և նրանց քարտուղարները հաճախ չեն կարողանում պարտիական աշխատանքը կառուցել այնպես, որ սկզբնական պարտկազմակերպությունը իրապես ներգործի ձեռնարկության, մինիստրության, բուհի, գիտական հիմնարկի գործերի վրա, բացահայտի և վերացնի նրանց աշխատանքի թերությունները։ Պարտիական կազմակերպությունների կոմիտեների, բյուրոների աշխատանքի լուրջ թերությունը պետք է համարել այն, նշում է ընկ. Սարկիսովը, որ նրանք հաճախ չեն ընդգրկում պարտիական-քաղաքական աշխատանքի ամբողջ կոմպլեքսը, չեն կարողանում գտնել այն հանգուցային հարցերը, որոնց լուծումն ապահովեր ամբողջ կոլեկտիվի հաջող գործունեությունը։ Շատ պարտիական կազմակերպություններ մտածված աշխատանք չեն կատարում ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, գիտական հիմնարկների համերաշխ, աշխատունակ և համախմբված կոլեկտիվների ստեղծման համար, որոնք ունենային իրենց սեփական տրադիցիաները։

Պարտիական կազմակերպությունները դեռևս թույլ են ղեկավարում կոմերիտմիությանը, երիտասարդության և մասնավորապես ուսանողության շրջանում քրտնաջան դաստիարակչական աշխատանք չեն կատարում։ Շատ պարտիական աշխատողներ, դասախոսներ և պրոֆեսորներ չեն մասնակցում կոմերիտական կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին, քիչ են լինում հանրակացարաններում, քաղաքական զեկուցումներով հազվադեպ են հանդես գալիս երիտասարդության առջև։

Պարտիական կազմակերպությունների աշխատանքի խոշոր թերություններից մեկը, ինչպես նշվեց պլենումում, այն է, որ առանձին դեպքերում նրանք ճիշտ չեն որոշում իրենց առջև դրված այն կոնկրետ խնդիրները, որոնք բխում են պարտիայի ու կառավարության որոշումներից։ Այդպես վարվեց, օրինակ, Երևանի Պետական համալսարանի պարտիական կազմակերպությունը, որի աշխատանքը պլենումում սուր քննադատության ենթարկվեց։ Հայտնի է, որ ՍՄԿՊ XX համագումարը լուրջ և կարևոր խնդիրներ դրեց բարձրորակ, լայն մտահորիզոնի ու բարձր կուլտուրայի տեր, բազմակողմանիորեն զարգացած կադրերի պատրաստման ուղղությամբ։ Թվում էր, թե համալսարանի պարտիական կոմիտեն գործնական հետևություններ կաներ համագումարի որոշումներից և պարտիական կազմակերպության ու ամբողջ կոլեկտիվի ուշադրությունը կսևեռեր այն պրակտիկ միջոցառումների մշակման ու իրագործման վրա, որոնք ապահովեին համագումարի որոշումների կատարումը։ Մինչդեռ այդպես չստացվեց։ ՍՄԿՊ XX համագումարի արդյունքների քննարկմանը նվիրված պարտիական ժողովում կոմունիստների մի մասը, աղմուկ բարձրացնելով անհատի պաշտամունքի քննադատության շուրջը, ժողովի ուշադրությունը շեղեց այն խոշոր խնդիրներից, որոնք կանգնած են համալսարանի կոլեկտիվի առջև։ Համալսարանի պարտիական կոմիտեն, չկանգնելով քաղաքական անհրաժեշտ բարձրության վրա, փաստորեն ճիշտ ուղիով չտարավ ժողովը։

Պարտիայի քաղաքային կոմիտեն թույլ է կապված սկզբնական պարտկազմակերպությունների հետ, իր ելույթում ասում է ընկ. Վ. Համազասպյանը (Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտ)։ Պարտիական ակտիվի շրջանային և քաղաքային ժողովները երբեմն անցնում են ցածր մակարդակով, նրանցում գործարար կերպով չեն քննարկվում հարցերը, ճիշտ գնահատական և արժանի հակահարված չի տրվում սխալ ելույթներին ու արտահայտություններին։ Այնուհետև նա քննադատում է քաղկոմին և ՀԿՊ Կենտկոմի գիտության ու կուլտուրայի բաժնին՝ կադրերի ընտրության գործում սխալներ թույլ տալու, մանկավարժական բուհերում անորակ մարդկանց դասախոսական աշխատանքի նշանակելու համար։

Մեր բուհերում և գիտական հիմնարկներում, ասում է Կիրովյան շրջկոմի քարտուղար ընկ. Հ. Ուրմազյանը, անբավարար է դրված ստեղծագործական աշխատանքը։ Պարտիական կազմակերպությունները դեռևս քիչ գործ են անում գիտության և արտադրության կապն ամրապնդելու ուղղությամբ։ Շատ դեպքերում սկզբնական պարտիական կազմակերպությունները նախաձեռնություն հանդես չեն բերում, և այն հարցերը, որոնք պետք է լուծեն իրենք, հասցնում են շրջկոմ կամ քաղկոմ, ծանրաբեռնում նրանց։ Ընկ. Ուրմազյանն այնուհետև խոսելով կոմունիստների մարքսիստական-լենինյան դաստիարակության մասին, նշում է, որ պարտիական կազմակերպությունները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն այն բանին, որ մեր կադրերը և բոլոր կոմունիստները խոր կերպով ուսումնասիրեն Լենինի աշխատությունները։

Ուսանողության դաստիարակության գործի կազմակերպման ուղղությամբ դրական աշխատանք է կատարում Ժդանովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը։ Ինստիտուտի պարտբյուրոյի քարտուղար ընկ. Լ. Հայրապետյանը, պատմելով պարտիական կազմակերպության աշխատանքի փորձի մասին, միաժամանակ առաջ քաշեց պարտիական ու սովետական ակտիվի կողմից ռուսաց և օտար լեզուների տիրապետման խնդիրը։

ՀԿՊ Նոր Բայազետի շրջկոմի քարտուղար ընկ. Վ. Մաղիկյանը խոսեց այն մասին, որ հարկավոր է ուժեղացնել կոնկրետ և գործնական օգնությունը սկզբնական պարտկազմակերպություններին։ Քաղկոմի և շրջկոմների քարտուղարները, բաժինների վարիչները պետք է սիստեմատիկաբար մասնակցեն պարտիական կազմակերպությունների ժողովներին, կոմիտեների և բյուրոների նիստերին, ժամանակին լուծում տան կոմունիստների առաջ քաշած հարցերին, բոլոր միջոցներով բարձրացնեն ու զարգացնեն պարտիական կազմակերպությունների և կոմունիստների նախաձեռնությունն ու ակտիվությունը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընկ. Վ. Համբարձումյանը նշեց, որ պարտիայի քաղկոմը, շրջկոմները և սկզբնական պարտկազմակերպությունները անբավարար են զբաղվում ինտելիգենցիայի քաղաքական դաստիարակությամբ։ Երևանում անհրաժեշտ բարձրության վրա չի դրված տեխնիկական պրոպագանդան, քիչ է հրատարակվում տեխնիկական գրականություն։ Վաղուց հասունացել է տեխնիկայի տուն ունենալու հարցը և ժամանակն է, որ համապատասխան օրգանները մտածեն այդ մասին։ Խոսելով քննադատության և ինքնաքննադատության ծավալման մասին, ընկ. Համբարձումյանն ասաց, որ որոշ դեպքերում առանձին մարդիկ փորձում են գռեհկացնել քննադատությունը, իսկ պարտիական կազմակերպությունները հանդուրժում են նման մարդկանց։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ ընկ. Շ. Առուշանյանը իր ելույթում նշեց, որ ՍՄԿՊ XX համագումարի արդյունքների քննարկումը ցույց տվեց Երևանի պարտիական կազմակերպությունների սերտ համախմբվածությունը ՍՄԿՊ Կենտկոմի շուրջը, նրանց պատրաստակամությունը՝ հաջողությամբ կատարելու ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանը։ Խոսելով արդյունաբերական արտադրանքի պլանների կատարման ուղղությամբ քաղաքի պարտիական կազմակերպության կատարած զգալի աշխատանքի մասին, ընկ. Առուշանյանը միաժամանակ նշեց, որ պարտիայի քաղկոմը, շրջկոմները և սկզբնական պարտիական կազմակերպություններից շատերը դեռևս դանդաղ են շրջադարձ կատարում դեպի տնտեսական շինարարության կոնկրետ ղեկավարման հարցերը, առանձին դեպքերում տնտեսությունը ղեկավարում են մակերեսորեն, ոչ գործիմաց։

Այնուհետև ընկ. Առուշանյանը խոսում է աշխատավորության քաղաքական դաստիարակության գործում եղած թերությունների մասին, ցույց է տալիս, որ պարտիական կազմակերպությունները մասնավորապես անբավարար են զբաղվում երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության հարցերով։ Նա նշում է, որ առանձին պարտկազմակերպություններում ցածր է պարտիական կարգապահությունը, պատշաճ ուշադրություն չի դարձվում այն բանին, որ բոլոր կոմունիստները սրբությամբ պահպանեն պարտիայի Կանոնադրությունը։ Նկատվում են փաստեր, երբ կոմունիստը դուրս է գալիս Կանոնադրության շրջանակներից, խախտում է այն, իսկ պարտկազմակերպություններն ու նրանց ղեկավարները չեն ուղղում նման կոմունիստներին։ Անհրաժեշտ է կոմունիստներին լայնորեն պարզաբանել պարտիական կյանքի լենինյան նորմաները, նրանց դաստիարակել այդ նորմաներն անշեղորեն պահպանելու ոգով։ Պարտիայի քաղաքային և շրջանային կոմիտեները պետք է ուժեղացնեն աշխատանքը պարտիական ակտիվի հետ, ամեն կերպ բարձրացնեն քաղկոմի և շրջկոմների անդամների պատասխանատվությունը պարտիական կոմիտեների աշխատանքի համար։

Պլենումում քննադատական դիտողություններ եղան ՀԿՊ Կենտկոմի, նրա բաժինների և հատկապես գիտության ու կուլտուրայի բաժնի հասցեին՝ սկզբնական պարտիական կազմակերպությունների հետ թույլ կապի, նրանց ղեկավարման գործում քաղկոմին և շրջկոմներին անբավարար օգնելու համար։

Պլենումում ելույթ ունեցան նաև ընկ. ընկ. Ս. Գևորգյանը (Հայկոնսերվտրեստ), Ս. Նշանյանը (Մեղրի), Վ. Նալբանդյանը (ՀԿՊ Կենտկոմ), Ե. Մալցեր, Կ. Ուզունյանը (ՀԼԿՄ քաղկոմ), Ս. Հակոբյանը (Բասարգեչար), Վ. Գրիգորյանը (Ալավերդի), Մ. Մելիքյանը (ՀԿՊ Երևանի քաղկոմ), Բ. Մուրադյանը (Ստալինյան շրջկոմ), Լ. Ղարիբջանյանը (Սպանդարյանի շրջկոմ), Լ. Թոքայանը (ՀԿՊ Երևանի քաղկոմ), Ս. Բոյախչյանը (Երևանի ավտոդողերի գործարան), Ա. Եղիազարյանը (Գիտությունների ակադեմիա), Ա. Աղոյանը («Պարտիական կյանք» ամսագրի խմբագրություն), Է. Թոփչյանը (Գրողների միություն)։

Վերջում ելույթ ունեցավ Հայաստանի ԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Թովմասյանը։

Քննարկված հարցի առթիվ պլենումն ընդունեց համապատասխան որոշում։